

Ֆալիբիլիզմի զարգացումը ժամանակակից իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում

Աքելյան Դավիթ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2026.1hs-124>

Հանգուցային բառեր. սխալի հնարավորություն, մեթոդաբանություն, էմպիրիզմ, պրագմատիզմ, պոզիտիվիզմ, քննադատական ռացիոնալիզմ, ինդուկցիայի խնդիր, ճշմարտություն

Նախաբան

Ֆալիբիլիզմի ձևավորման և զարգացման պատմությունն ընդգրկում է փիլիսոփայության ու գիտության փոխհաջողաձ աճն առաջադրելի շրջաններ, հարացույցեր և միտումներ: Այն նախ սկիզբ է առնում անտիկ հունական փիլիսոփայությունում, որտեղ ֆալիբիլիզմի տարրերն աստիճանաբար ձևավորվում են ակադեմիական կամ պիտոնյան սկեպտիցիզմի կողքին հետզհետե զարգացող մեդոնացված սկեպտիցիզմի շրջանակում: Ապա նկատելի է դառնում ֆալիբիլիզմի տարրերի զարգացումն ու դրսևորվելը Դեկարտի մեթոդաբանական սկեպտիցիզմի ու Հյումի ինդուկտիվիստական սկեպտիցիզմի շրջանակում, որոնց արդյունքում աշխարհայացքային-իմացաբանական նշանակության կողքին ֆալիբիլիզմը ձեռք է բերում նաև մեթոդաբանական-նորմատիվ դեր և նշանակություն: Ֆալիբիլիզմի հետագա զարգացումը և վերջինիս հիմնական սկզբունքների ձևակերպման ու սահմանման փորձերը կապված են 19-րդ դարի ամերիկյան պրագմատիզմի ներկայացուցիչներ Չարլզ Պիրսի, Ուիլյամ Չեյմսի և Ջոն Դյուիի հիմնարար աշխատանքների հետ: Պրագմատիկ փիլիսոփաների կողմից ուսումնասիրվող կենտրոնական հիմնահարցերից էին ռացիոնալ և էմպիրիկ ճանաչողության սահմանափակության, ճանաչողությունում ռացիոնալ կասկածի մշտական առկայության, համոզմունքների և գիտելիքների ձեռքբերման և հիմնավորման, գիտության ու գիտական հետազոտության նպատակի և մի շարք այլ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրումն ու քննումը, ի թիվս այլ հիմնահարցերի, էլ ավելի բարձրացրեց ու ամրապնդեց ֆալիբիլիզմի իմացաբանական-գիտաբանական արժեքը իմացաբանության և գիտության փիլիսոփայության խնդրակարգերի համատեքստում: Հիմնվելով հարյուրամյակներ ընդգրկող իմացաբանական հարուստ ավանդույթների և մեծանուն մտածողների ուսումնասիրելի վրա՝ 20-րդ դարում ֆալիբիլիզմի զարգացումը ստացավ սկզբունքորեն նոր որակ և ընթացք՝ նպաստելով ֆալիբիլիզմի հայեցակարգայնացմանը և հարուստ ինտելեկտուալ ավանդույթի ձևավորմանը: Ժամանակակից իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում ֆալիբիլիզմի զարգացումը կապված է այնպիսի մեծանուն մտածողների հետ, ինչպիսիք են Բերտրան Ռասելը, Ջոն Դյուիին, Կառլ Փոփերը և ուրիշները: Այնուամենայնիվ, ժամանակակից ֆալիբիլիստական իմացաբանության և ֆալիբիլիզմի հայեցակարգի ձևավորումը նախևառաջ պետք է դիտարկել 19-ից մինչև 20-րդ դարի առաջին կեսում աշխարհի գիտական պատկերում տեղի ունեցած փոփոխությունների և իմացաբանական-գիտաբանական խնդրակարգի մի շարք հիմնախնդիրների վերանայման ու վերաիմաստավորման՝ պրագմատիզմի, պոզիտիվիզմի և քննադատական ռացիոնալիզմի փիլիսոփայության շրջանակում կատարված փորձերի համատեքստում:

Ֆալիբիլիզմի զարգացումը դասական և ոչ դասական գիտական պատկերում

18-րդ դարից ի վեր ավելի քան երկու հարյուրամյակ նյութական դասական մեխանիկական համարվել է գիտության ու ֆիզիկական իրականության վերաբերյալ լավագույն նկատ

րագրությունը, իսկ դասական ֆիզիկայի օրենքները՝ աշխարհի ֆիզիկական պատկերի վերաբերյալ «վերջնական խոսք»։ Դասական մեխանիկայից բխող կանխատեսումներն ու դրա շրջանակում նկարագրվող օրենքները մասնագիտական համայնքի մեծամասնության կողմից ընկալվում էին որպես բացարձակ, վերջնական ու անփոփոխ ճշմարտություններ։ *«Այդ ժամանակներում գիտնականները կարծում էին, որ մեր ողջ տիեզերքը և մենք դրանում ձևավորում ենք հսկայական ու բարդ մեխանիկական մեքենա, որը ենթարկվում է նյուտոնյան օրենքներին»* [6, 10]: 20-րդ դարի սկզբին Ալբերտ Այնշտայնի հիմնարար աշխատանքները հարաբերականության հատուկ և ընդհանուր տեսությունների շրջանակում ցույց տվեցին դասական ֆիզիկայի խնդիրներն ու սահմանափակումները՝ իրականության դասական մեխանիկական պատկերը փոխարինելով քվանտառելյատիվիստական պատկերով, իսկ խիստ դետերմինիզմի գաղափարը հավանական ու հարաբերական դետերմինիզմով։ Արդյունքում բացարձակ ճշմարտության հավակնություններ ունեցող գիտական տեսությունը՝ դարձան սխալական և միայն սահմանափակություններով կիրառելի՝ ի ցույց դնելով ինչպես մարդկային ճանաչողության սահմանափակությունները և այնպես էլ մեր լավագույն տեսությունների ու ամենահիմնավոր գիտելիքների սխալականությունը։ Ֆալիբիլիզմը, որպես փիլիսոփայական հայեցակարգ, հիմնված է նկարագրված նախադրյալի վրա՝ *«Մարդիկ երբեք չեն կարող ունենալ միանշանակ և վերջնական համոզմունք այն մասին, որ իրենց գաղափարները կամ համոզմունքները բացարձակ ճշմարտություններ են։ Այն, ինչ մենք այսօր գիտենք, ապագայում, ամենայն հավանականությամբ, կփոխարինվի շատ տարբեր և ենթադրաբար ավելի լավ գաղափարներով»* [12, XI]: Առաջարկված մոտեցման դեպքում, եթե անքննելի և բացարձակ ճշմարտություն համարված նյուտոնյան ֆիզիկայի տեսությունը փոխարինվել է Այնշտայնի ֆիզիկական տեսությամբ, ապա ապագայում Այնշտայնի ֆիզիկական տեսությունն ու ընդունված համարվող ժամանակակից այլ տեսությունները կարող են լիարժեքորեն փոխարինվել ավելի լավ տեսություններով։ Մարդկային սխալականության, ճանաչողությունում ռացիոնալ կասկածի մշտական առկայության, անցիոնալ և էմպիրիկ ճանաչողության սահմանափակության վերաբերյալ պատկերացումները եղել են Այնշտայնին և Նյուտոնին նախորդած փիլիսոփայական ու գիտական ավանդույթներում ևս։ Մակայն մինչև 19-րդ դարը գրեթե բոլոր մտածողները համակարծիք են եղել այն հարցում, որ գիտելիքը պահանջում է անսխալականություն ու անկասկածելիություն, և իմացության շարունակական բարելավման արդյունքում ի վերջո հնարավոր է հասնել բացարձակ ճշմարտության (ինֆալիբիլիզմ)։ Ուստի ճշմարտությունը ոչ միայն հետազոտության և գիտության նպատակն է, այլ նաև դրա հասանելի վերջնաարդյունքը։

Ֆալիբիլիզմի ժամանակակից պատմությունն ու զարգացումը մեծապես կապված է եղել գիտական հետազոտության և, ընդհանրապես, գիտության նպատակի հիմնահարցերի քննության հետ։ Իր ժամանակաշրջանում Նյուտոնի տեսության ազդեցիկությունն այնքան մեծ էր, որ այդ շրջանի մի շարք մտածողների համար գիտության և հետազոտության նպատակը այլևս չէր համարվում ճշմարտությունը կամ դրան ձգտելը (որովհետև այն արդեն բացահայտված է), այլ միայն դրա լրացումը և մեկնաբանումը։ Ի հակադրություն 19-րդ դարի գիտական համայնքի մեծամասնության բրիտանացի փիլիսոփա Ջոն Ստյուարտ Միլն առաջիններից էր, ով *«չէր կարողանում տեսնել Նյուտոնի՝ բացարձակ ճշմարտությունը բացահայտելու «պարզ փաստը»* [12, XX]: Խոսելով ճշմարտության և գիտական հետազոտության նպատակի մասին՝ Միլը գրում է. *«Այն համոզմունքները, որոնց վրա մեծամասամբ ապավինում ենք, պաշտպանված և երաշխավորված չեն, այլ փոխարենը մշտապես ուղղված են աշխարհին՝ պահանջելով ապացուցել իրենց իսկ անհիմնավորվածությունը...։ Եթե մենք բաց լինենք ճշմարտությունների նկատմամբ, ապա մենք կարող ենք հուսալ, որ էթե կա ավելի լավ ճշմարտություն, այն կգտնվի, երբ մարդկային միտքը կարողանա ընկալել այն։*

Միևնույն ժամանակ մենք կարող ենք հույս դնել ճշմարտության վերաբերյալ մեր օրերում առկա մոտեցումներին: Լինելով սխալական՝ սա այն որոշակիության աստիճանն է, որին հնարավոր է հասնել» [7, 21]: Ընդունելով մարդու և իր ճանաչողության կարողությունների սխալականությունը՝ Միլը համոզված էր, որ գոյություն չունի մեկ վերջնական ճշմարտություն, այլ փոխարենը պետք է անընդհատ փնտրել նոր ճշմարտություններ՝ հիմնվելով այդ պահի համար ընդունելի ճշմարտության վրա: Ճշմարտության բնույթի, ինչպես նաև հետազոտության ու գիտության նպատակի վերաբերյալ Միլի մոտեցումները մեծ ազդեցություն ունեցան պրագմատիզմի ներկայացուցիչների իմացաբանական հայացքների և հատկապես 20-րդ դարի առաջին կեսում բուռն գործունեություն ծավալած Ջոն Դյուիի մոտեցումների վրա: Զարգացնելով Միլի, Պիրսի և Ջեյմսի ֆալսիֆիստական մոտեցումները՝ Դյուին իր ավելի ուշ շրջանի աշխատանքներում փորձում է գիտության համար զարգացնել այնպիսի փիլիսոփայություն, որը թույլ չէր տա նոր գիտությանը (Այնշթայնի տեսությանը) հավակնել բացարձակ ճշմարտությանը և վերածվել գիտական դոգմայի այնպես, ինչպես դա տեղի ունեցավ նյուտոնյան ֆիզիկայի հետ: Մտաստիսանելով հարցին, թե «ո՞ր է գիտության և գիտական հետազոտության նպատակը», Դյուին, ինչպես և Պիրսը, արձանագրում է, որ գիտական տեսությունները երբեք չեն կարող լինել ճշմարիտ և բոլոր գիտական տեսությունների ճշմարտացիության արժեքը պայմանավորված է տվյալ ժամանակում առկա իմացությամբ: Եթե ապագայում գիտնականներին հաջողվի հայտնաբերել նոր փաստեր, որոնք կհակասեն ճշմարտության մասին առկա պատկերացումներին, ապա առկա ճշմարտությունը պետք է փոխարինվի նոր ճշմարտությամբ [12, XXIII]: Ճշմարտության դասական և անփոփոխ ըմբռնումն այս կերպ փոխարինվում է պրագմատիկական ճշմարտության գաղափարով: Պրագմատիզմի ներկայացուցիչների ըմբռնմամբ ճշմարտությունը կարծիք է, որը ձևավորվում է տվյալ ժամանակ գիտական հանրությունը՝ հաշվի առնելով և համադրելով մի շարք փաստեր ու արդյունքներ: Եթե փոխվում են փաստերը, ու տեղի են ունենում նոր բացահայտումներ, ապա փոխվում է նաև կարծիքը: Այս առնչությամբ Դյուին գրում է, որ տրամաբանության տեսանկյունից ճշմարտության լավագույն սահմանումը, որն իրեն հայտնի է, պատկանում է Պիրսին. «Կարծիքը, որը վճռված է ի վերջո ընդունվելու բոլորի կողմից, ովքեր ուսումնասիրում են այն, հենց այն է, ինչը մենք անվանում ենք ճշմարտություն: Եվ օրյեկտը, որը ներկայացված է այս կարծիքի շրջանակում, կհամարվի իրական» [5, 345]: Գիտական փաստերի և ճշմարտության փոփոխական բնույթի վերաբերյալ պրագմատիկական ըմբռնումը ձևավորվել է ոչ միայն 19-րդ դարի դասական ֆիզիկայի ճգնաժամի ու Այնշթայնի տեսության, այլ նաև Չարլզ Դարվինի էվոլյուցիոն տեսության ի հայտ գալու արդյունքում: Դյուին, մեծ խանդավառությամբ ընդունելով էվոլյուցիոնիզմի գաղափարը, այն փորձում է տարածել նաև գիտելիքների և ճանաչողության վրա՝ համոզված լինելով, որ ոչ միայն բնությունն ու օրգանիզմներն են էվոլյուցիա ապրում, այլ նաև մարդկային իմացությունն ու դրա ձևավորման միջոցները. ««Տեսակների ծագում»-ը իր հետ բերեց մի մտածելակերպ, որը, ի վերջո, պետք է փոխեր գիտելիքի տրամաբանությունը, հետևաբար, նաև բարոյականության, քաղաքականության և կրոնի նկատմամբ վերաբերմունքը» [5, 2]: Այս իմաստով դարվինյան էվոլյուցիոնիզմը դիտարկվում էր որպես բնության անընդհատ և շարունակական զարգացման ու փոփոխման անհերքելի փաստ, որը նախևառաջ տարածվում էր բնության ու աշխարհի կենսաբանական գործընթացների և, այնուհետև, դրանց վերաբերյալ մեր պատկերացումների ու գիտելիքների վրա: Այսպիսով, պրագմատիզմի ներկայացուցիչները արձանագրում են, որ բացարձակ, անփոփոխ և անսխալական ճշմարտությունը երբեք հասանելի չէ: Եվ քանի որ այն հնարավոր չէ ձեռք բերել, ապա այն նաև չի կարող լինել ճանաչողության, հետազոտության և գիտության նպատակը: Հարկ է նշել, որ պրագմատիզմի ներկայացուցիչները թեև չեն ընդունում բացարձակ ճշմարտությունը որպես գիտության նպատակ հետազոտության ու ճանաչողության անմիջական արդյունքի իմաստով, այնուհաս-

մենայնիվ, նրանք կարևորում են ճշմարտության փնտրտուքին ուղղված գիտնականի ներքին մղումը, որը ուղենիշային դեր է ունենում գիտնականի՝ հետազոտությունում մշտապես ճշմարտության իդեալին ձգտելու համար: Հատկապես Պիրսն իր մի շարք աշխատանքներում ճշմարտության մասին խոսելիս արձանագրում է վերջինիս թեև անհասանելի, սակայն հետազոտության ու գիտական համայնքի կողմից մտավոր գործունեության կարգավորման ու ուղղորդման համար կարևոր արժեքային-ուղենիշային դերն ու նշանակությունը [8, 13-14]:

Գիտական ճանաչողության նպատակի վերաբերյալ պրագմատիկական ֆալսիֆիզմից բխող մոտեցումը բավականին լայն տարածում է ընդունում ստացավ 20-րդ դարի մի շարք մտածողների կողմից: Մասնավորապես, Ռիչարդ Ռոբրտին և Դոնալդ Դելվիտոնը պնդում են, որ քանի որ լիարժեք որոշակիությունն ու միանշանակությունն անհասանելի են ճանաչողությունում և անկախ այն բարելավելու փորձերից՝ մեր իմացությունը մշտապես պարունակելու է սխալական համոզմունքներ, ապա անիմաստ է հռչակել ճշմարտությունը որպես ճանաչողության և գիտական հետազոտության նպատակ [4, 6-7]: Լևան մոտեցմանը սկզբունքորեն դեմ են արտահայտվել 20-րդ դարի նշանավոր ֆալսիֆիստներ Բերտրան Ռասելը և Կառլ Փոփերը՝ արձանագրելով, որ ոչ մի պարագայում չպետք է հրաժարվել բացարձակ ճշմարտությունից՝ որպես գիտության և հետազոտության նպատակ: Ե՛վ Ռասելը, և՛ Փոփերն, իհարկե, իրենց փաստարկներում հաշվի են առնում ֆալսիֆիստական իմացաբանությունից բխող բոլոր խնդիրները՝ մարդկային սխալականություն, ճանաչողական կարողությունների ու փորձի սահմանափակությունը, հավաստի և բացարձակ գիտելիքների ձեռքբերման, ինչպես նաև գիտելիքների հիմնավորման բարդությունները: Այնուամենայնիվ, փիլիսոփաները համակարծիք են այն հարցում, որ բացարձակ ճշմարտությունը պետք է դիտարկել որպես գիտական հետազոտության և, ընդհանրապես, գիտության անհասանելի և անսովաճելի նպատակ: Այսպիսի մոտեցումն արձանագրում է, որ վերջնական և բացարձակ լինելու հայտ ներկայացնող ցանկացած ճշմարտություն ի վերջո անըմբռնելի է և կարող է բովանդակությամբ անվերջ ընդլայնվել [12, XXV]: Այս առնչությամբ Փոփերը գրում է. «Գիտության խնդիրն է փնտրել ճշմարտություններ և, հասկապես, ճշմարիտ տեսություններ: Միևնույն ժամանակ մենք պնդում ենք, որ ճշմարտությունը գիտության միակ նպատակը չէ: Մենք ցանկանում ենք ավելին, քան ճշմարտությունը՝ ակնկալելով, որ այն, ինչ մենք փնտրում ենք, կլինի հետաքրքիր ճշմարտություն՝ մի բան, որը կտրվի խիստ դժվարությամբ: Մոսկ ճշմարտությունը բավական չէ, մեր փնտրածը մեր խնդիրների պատասխաններն են» [9, 229]: Հակադարձելով ճշմարտության վերաբերյալ Դյուլիի պրագմատիկական հայացքներին՝ Ռասելը նշում է, որ ճշմարտության մեկնաբանումը «որպես մարդու կողմից առավելապես ոչ կառավարելի փաստերից կախված իրողություն» մեր ժամանակների մեծագույն վտանգն է [11, 827-828]: Ռասելը դեռևս 20-րդ դարի առաջին կեսում նկատել է ճշմարտության ընկալման ու սահմանման այն միտումը, որն այսօր լայն տարածում է գտել փիլիսոփայական շրջանակում: Մասնագիտական համայնքի ներկայացուցիչներից շատերն այսօր էլ համակարծիք են բացարձակ ճշմարտության անհասանելիության և անհնարիմության հարցում: Սակայն, միևնույն ժամանակ, գիտնականների շրջանում ընդունված չէ ուսումնասիրության և հետազոտության համար սահմանել գործնականում անհասանելի և անիրականանալի նպատակներ: Ճշմարտության պրագմատիկական հայեցակարգը հաճախ էլ ավելի է կարևորվում դինամիկ և արագ փոփոխվող աշխարհն ուսումնասիրող ժամանակակից գիտության կողմից՝ շատ ավելի բարձր իմացաբանական արժեք վերագրելով փոփոխվող, ոչ կայուն, սակայն հասանելի, չափելի, իրատեսական և սխալական ճշմարտություններին: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Ռասելի և Փոփերի կողմից հետապնդվող ֆալսիֆիստական կամ սխալական ճշմարտության հայեցակարգը ոչ միայն չի հակասում պրագմատիկական ճշմարտությանը, այլ նաև լրացնում ու զարգացնում է այն՝ էլ ավելի կա-

ռուցողական ու պտղաբեր դարձնելով գիտական ուսումնասիրությունը, հետազոտությունը և ճանաչողությունն ընդհանրապես: Բացարձակ ճշմարտությունը վերադարձնելով գիտության նպատակի բարձրագույն պատվանդանին՝ Ռասելը և Փոփերն այս կերպ ապահովում են մեր իմացության շարունակական և անընդհատ բարելավումը: Ֆալսիֆիստը, ով ձգտում է բացարձակ ճշմարտության աննվաճելի և անհասանելի նպատակին, չի անում սա մարդկանց վիատեցնելու համար, այլ այս կերպ քաջավերում և խթանում է մարդկանց շարունակական կատարելագործման ձգտումը: Ճշմարտության պրագմատիկական հայեցակարգը և դրանից բխող պրակտիկ և հասանելի նպատակները, ինչպես, օրինակ, հիմնավոր գիտական տեսությունների մշակումն է, ճանաչողության շրթայի մասը կազմող կարևորագույն բաղադրիչներն են, քանի որ առանց հասանելի և գործնականում հնարավոր նպատակների հնարավոր չէ առաջ ընթանալ: Սակայն բացարձակ ճշմարտությունը սահմանելով որպես գիտության և գիտական հետազոտության նպատակ՝ ճանաչողությունը ձեռք է բերում օբյեկտիվ և համընդհանուր իմացաբանական ուղենիշ, որը ապահովում է իմացության շարունակական կատարելագործման, սխալներից մաքրելու ու բարելավելու անշեղությունը և անընդհատությունը, ինչպես նաև երաշխավորում է գիտության՝ որպես մեկ միասնական նպատակին ուղղված ռացիոնալ ու օբյեկտիվ գործունեության ոլորտի ապահովումը և եղելիությունը:

Գիտության և հետազոտության նպատակի հիմնախնդիրը միակը չէ, որի վերաբերյալ ժամանակակից ֆալսիֆիզմի ներկայացուցիչների կարծիքները հաճախ տարանջատվել կամ հակադրվել են միմյանց: Դեռևս 18-րդ դարում, ջաստիֆիկացիոնիստական իմացաբանության շրջանակում Էմպիրիզմի մի շարք ներկայացուցիչների կողմից առանձնակի կարևորում ստացավ ինդուկցիայի հիմնախնդիրը: Էմպիրիզմի ներկայացուցիչները միակարծիք էին այն հարցում, որ փորձը կարող է լինել հավաստի և հիմնավոր գիտելիքի աղբյուր: Սակայն արդեն այդ ժամանակաշրջանում շատերը հասկանում էին, որ փորձի կողմից տրված եզակի դատողություններից ընդհանուր եզրահանգումների իրականացումը միշտ չէ, որ ապահովում է կանոնավոր ու միանաչանակ եզրակացություններ: Անգամ ձևավորված կարծիքին հակասող մեկ մասնավոր դեպքը կարող է ինդուկտիվ մտահանգումն ու ստացված եզրակացությունը դնել կասկածի տակ: Այստեղ ի հայտ են գալիս մի շարք հարցեր՝ արդյո՞ք հնարավոր է եզակի դատողություններից բխեցնել ընդհանուր եզրահանգումներ, և արդյո՞ք փորձը կարող է հիմնավորել տեսությունը: Դեյվիդ Հյումի իմացաբանական համակարգում այս հարցերի քննությունը ունեցել է կենտրոնական նշանակություն: Հյումի կողմից մշակված ինդուկտիվիստական փիլիսոփայությունը և ինդուկցիայի հիմնախնդիրը հիմք դարձան ֆալսիֆիզմի հիմնական սկզբունքների ձևավորման, ինչպես նաև հետագայում ֆալսիֆիզմի աշխարհայացքային ու իմացաբանական-մեթոդաբանական նշանակություն ունեցող տարատեսակների զարգացման համար: Հյումն առաջ է քաշում հետևյալ հարցադրումները՝

- *«Անիջականորեն չդիտարկելի ապագայի իրադարձությունները կամ իրավիճակները կանխատեսելիս ինչպե՞ս է հնարավոր հիմնվել նախորդ փորձի վրա»:*
- *«Ինչպե՞ս կարող է փորձը ապացուցել և հիմնավորել մեր գաղափարների ու տեսությունների բացարձակ որաշակիությունն ու ճշմարիտ լինելը»:*

Հյումն արձանագրում է, որ անցյալում և ներկայում կատարված մեծաթիվ հաջող դիտարկումները երբեք չեն կարող երաշխավորել մեր եզրակացության բացարձակ ճշմարիտ լինելը ապագայում, քանի որ մշտապես առկա է այն մտավախությունը, որ հետագայում ի հայտ կարող է գալ մեր ունեցած փորձին ու եզրակացությանը հակադրող նոր փորձառություն [2, 91-92]: Խոսելով նաև մարդու ճանաչողական կարողությունների սահմանափակությունների մասին՝ Հյումը եզրակացնում է, որ մեր բոլոր համոզմունքներն ու եզրակացությունները սխալական են, և ապագայի վերաբերյալ մեր բոլոր եզրակացությունները լավա-

գույն դեպքում կարող են հիմնավորվել սխալականորեն և ունենալ հավանական բնույթ: Ինդուկտիվ փորձառության ու ինդուկտիվ եզրակացությունների վրա հիմնված դատողությունները և տեսությունները երբեք չեն կարող ունենալ հավակնություններ լինելու բացարձակորեն ճշմարիտ, անսխալական և անկասկածելի: Իսկ արդեն 19-րդ դարում դասական ֆիզիկայի խնդիրների ի հայտ գալն ու հետազատական ֆիզիկայով փոխարինումը հիմք դարձավ ինդուկցիայի խնդրի անհաղթահարելիության ընդունման և գիտության ներսում իմացաբանական ճգնաժամի առաջացման համար: Ինդուկցիայի հիմնախնդիրը խիստ կարևոր նշանակություն է ունեցել 20-րդ դարում ֆալսիֆիկովի զարգացման և ֆալսիֆիկովի տարբեր մեկնաբանությունների ու տարատեսակների ի հայտ գալու համար: Բերտրան Ռասելը ընդունում է ինդուկցիայի վերաբերյալ Հյումի մոտեցումը՝ նույնպես արձանագրելով, որ ինդուկցիան չի կարող ապահովել գիտական ճշմարտությունների բացարձակ ճշմարիտ լինելը և անսխալականությունը: Այնուամենայնիվ, Ռասելը, ինչպես այդ շրջանի այլ մտածողներ, համարում էին, որ գիտական ճանաչողությունը հնարավոր չէ առանց ինդուկցիայի, և այս մեթոդից հնարավոր չէ հրաժարվել: Այս առնչությամբ փիլիսոփան գրում է. *«Հյումի թերահավատությունն ամբողջությամբ հիմնված է ինդուկցիայի սկզբունքի մերժման վրա... Եթե այս սկզբունքը ճիշտ չէ, ապա առանձին դիտարկումներից ընդհանուր գիտական օրենքներին հասնելու յուրաքանչյուր փորձ պետք է համարվի սխալ: ... Հյումն ապացուցել է, որ մաքուր էմպիրիզմը բավարար հիմք չէ գիտության համար: Բայց եթե այս մեկ սկզբունքը (ինդուկցիայի սկզբունքը) ընդունվի, մնացած ամեն ինչ պետք է դիտարկել այն տեսության շրջանակում, ըստ որի, մեր ողջ գիտելիքը հիմնված է փորձի վրա: Պետք է ընդունել, որ սա լուրջ շեղում է մաքուր էմպիրիզմից, և նրանք, ովքեր էմպիրիստ չեն, կարող են հարցնել, թե ինչու, եթե մեկ շեղումը թույլատրելի է, մյուսները ոչ: Սրանք, սակայն, հարցեր են, որոնք ուղղակիորեն չեն բարձրաձայնվել Հյումի փաստարկներում: Այն, ինչ ապացուցում են այս փաստարկները, և են չեն կարծում, որ սա կարելի է վիճարկել, այն է, որ ինդուկցիան անկախ տրամաբանական սկզբունք է, որը հնարավոր չէ բխեցնել ոչ փորձից, ոչ էլ այլ տրամաբանական սկզբունքներից, և որ առանց այս սկզբունքի գիտությունն անհնար է»* [11, 673-674]: Այստեղ արդեն կարող ենք նկատել այն փաստական հիմքը, որի հիման վրա Ռասելը պնդում է, որ գիտության նպատակը պետք է լինի անհասանելի, սակայն բացարձակ ճշմարտությունը: Եթե գիտությունը չի կարող գոյություն ունենալ առանց ինդուկցիայի, իսկ վերջինս իր հերթին չի կարող ապահովել գիտելիքների որոշակիությունն ու բացարձակ ճշմարիտ լինելը, ապա առավելագույնը, որը հնարավոր է գիտական ճանաչողությունում որպես վերջնարդյունք, սխալական ճանաչողության անընդհատ բարելավման միջոցով անհասանելի ու աննվաճելի բացարձակ ճշմարտության իդեալին ձգտելն է: Ինդուկցիայի հիմնախնդրի հարցում Դյուիին համակարծիք է Ռասելի հետ հետևյալ երկու մոտեցումներում՝

1. Գիտական ճանաչողությունը չի կարող տեղի ունենալ առանց ինդուկցիայի,
2. Ինդուկցիան չի կարող ապահովել և երաշխավորել գիտական գիտելիքի բացարձակ ճշմարիտ լինելը:

Սակայն Դյուիի մոտեցումը հեռանում է Ռասելի դիրքորոշումից գիտության և գիտական հետազոտության նպատակի հիմնախնդրի հարցում՝ արձանագրելով, որ եթե ճանաչողության և, հատկապես, գիտական ճանաչողության ընթացքում փոփոխվում են փաստերն ու իրողությունները, իսկ ինդուկցիան երբեք էլ չի կարող ապահովել բացարձակ ճշմարտությունների բացահայտումն ու ճանաչումը, ապա գիտության նպատակը կարող է լինել միայն պրագմատիկ և փոփոխական բնույթ ունեցող ճշմարտությունը: Պետք է արձանագրել, որ ինչպես Ռասելը և Դյուիին, այնպես էլ ժամանակակից գիտության փիլիսոփայության մի շարք ներկայացուցիչներ այդպես էլ չէին կարողանում հաղթահարել ինդուկցիայի հիմնախնդիրը և պատկերացնել գիտական ճանաչողությունը առանց ինդուկցիայի ու այս մեթոդի սահմանափակումների:

Ֆալիբիլիզմի զարգացումը Կառլ Փոփերի փիլիսոփայությունում

Ոչինդուկտիվիստական գիտության փիլիսոփայության և ֆալիբիլիստական տեսության կառուցման առաջին հաջող փորձի հեղինակն է Կառլ Փոփերը, որը գիտության տիրապետող ինդուկտիվիստական վերլիֆիկացիոնիզմի մեթոդը փոխարինեց ոչինդուկտիվիստական ֆալիբիլիզացիոնիզմով (հերքելիությամբ): Փոփերը գտնում է, որ գիտության մեթոդը պետք է ընկալել որպես այնպիսի փորձի վերաբերյալ տեսություն, որն օգնում է մարդկանց հերքել գիտական արդյունքները և ի ցույց դնել ենթադրյալ տեսությունների սխալականությունը [12, XLII]: Հատկանշական է արձանագրել, որ ինչպես Դյուին և Ռասելը, այնպես էլ Փոփերը համոզված է, որ ստուգելի փորձի կուտակման միջոցով երբեք հնարավոր չէ հասնել բացարձակ գիտական ճշմարտություններին և դրանց անսխալական հիմնավորմանը: Փոփերը միննույն ժամանակ մերժում է Դյուիի պրագմատիկական ճշմարտության գաղափարը և կիսում է Ռասելի բացարձակ ճշմարտությունը գիտական ճանաչողության ու հետազոտության նպատակ սահմանելու վերաբերյալ մոտեցումը: Սակայն որպեսզի հնարավոր լինի հաղթահարել ինդուկցիայի խնդիրը և վերջինիս սահմանափակումները, Փոփերն առաջարկում է դեռևս Հյումի կողմից ձևակերպված խնդրի իր բանաձևը՝ «*Ինչպե՞ս կարող է փորձն օգնել մեզ բացահայտել այնպիսի գիտական գաղափարներ, որոնք ավելի մոտ կլինեն անհասանելի և աննվաճելի բացարձակ ճշմարտության նպատակին*» [12, XLIV]: Փոփերի համոզմամբ՝ էմպիրիկական գաղափարները հիմնավորող կամ ապացուցող փորձի կուտակումը (կուտույսատիվիզմ) չունի որևէ առնչություն գիտության մեթոդի հետ, քանի որ «*չկա որևէ տրամաբանություն նրանում, որ մենք իրավունք ունենք համընդհանուր պնդումներ բխեցնել առանձին դատողություններից, անկախ այն բանից, թե որքան շատ են դրանք: Այս ճանապարհով ստացված ցանկացած եզրակացություն միշտ կարող է սխալ լինել: Անկախ նրանից, թե այժմ մենք սպիտակ կարապների քանի մասնավոր դեպք կարող ենք արձանագրել, սա չի հիմնավորի այն եզրակացությունը, որ բոլոր կարապները սպիտակ են*» [10, 27]: Գիտությունը պետք է առաջնորդվի բացառապես այնպիսի էմպիրիկական դատողություններով, որոնք «հնարավոր է միանշանակորեն որոշարկել կամ որոնք սխալական են, այսինքն, կարող են ենթարկվել այնպիսի կանոնավոր փորձերնության, որը կփորձի հերքել դրանք» [10, 42]: Ձեռք բերած փորձի և իմացության հերքելիությունը կամ սխալականությունը հիմք է գիտական առաջընթացի և գիտելիքների աճի համար, քանի որ այս կերպ գիտական իմացություն և տեսություններ կարող են մաքրվել հայտնաբերված սխալներից, իսկ սխալներից ուսուցանվելը թույլ կտա հետագայում առաջարկել նոր տեսություններ, որոնք նախորդ տեսությունները հերքող փորձի ու գործիակազմերին կկարողանան դիմախալ շատ ավելի արդյունավետ կերպով: «*Մենք երբեք չենք կարող հիմնավորել որոշակի կարգ (կրկնվող փորձ) ենթադրող համոզմունքի ճշմարտի լինելը: Սակայն որպես նախընտրություն հիմք կարող (ինդուկտիվ ճանապարհով ստացված եզրահանգումով) կարող է օգնել մրցակցող հիպոթեզների միջև ընտրություն կատարելիս*» [3, 94]: Ինդուկցիայի խնդրի վերաձևակերպման և վերաբժնորման փոփերյան փորձը կարելի է նաև դիտարկել բացատրող տեսությունների (ոչ փորձնական դրույթների) համատեքստում: Պատասխանելով հարցին, թե արդյոք հնարավոր է որևէ համընդհանուր բացատրող տեսության սխալականությունը հաստատել փորձում տրված եզակի «ստուգող դատողությամբ», փոփերը դրական պատասխան է տալիս՝ նշելով, որ փորձնական եզակի փաստը կարող է միայն ցույց տալ առաջադրված համընդհանուր բացատրող տեսության սխալականությունը և օգնել մրցակցող բացատրող տեսությունների միջև նախընտրություն կատարելիս [1, 44-52]: Փոփերյան ֆալիբիլիզացիոնիզմն իր հերթին հիմնված է մարդկային իմացության, գիտելիքների սխալական բնույթի, մարդկային ճանաչողության կարողությունների սահմանափակության, ինչպես նաև բացարձակ ճշմարտություններ (հատկապես գիտական) բացահայտելու անհնարինության ֆալիբիլիստական հիմնարար գաղափարների վրա: Կարելի է արձանագրել, որ Դյուին

և Ռասելը, հիմնվելով դասական ֆիզիկայի ճգժնաժամի և էվոյուցիոն տեսության ի հայտ գալու պատմական իրադարձությունների, ինչպես նաև մարդկային սխալականության, գիտության մեթոդի ու գիտական ճշմարտությունների փոփոխական և սխալական բնույթի իրողությունների վրա, մնում են առավելապես աշխարհայացքային ֆալսիֆիլզոֆի շրջանակում: Ե՛վ Ռասելը, և՛ Դյուին արձանագրում են բացարձակ, անսխալական, անկասկածելի և վերջնական ճշմարտություններին հասնելու անհնարինությունը: Սակայն Ռասելին այդպես էլ չի հաջողվում հաղթահարել ինդուկցիայի հիմնախնդիրն ու այստեղից բխող սահմանափակումները, որոնք գիտությանը զրկում են բացարձակ ճշմարտության վերջնանպատակին հասնելու որևէ իրատեսական մեթոդից: Դյուին փորձում է վերաձևակերպել ինդուկցիայի հիմնախնդիրը, սակայն, այն հարմարեցնելով պրագմատիկական ճշմարտությունների հայեցակարգին, գիտական ճանաչողությունը հանգեցնում է զուտ ժամանակավոր պրագմատիկական ճշմարտությունների բացահայտմանը: Սա նաև հիմք է նախապատրաստում իմացաբանական ռելյատիվիզմի համար, քանի որ ճշմարտության պրագմատիկական կամ օգտապաշտական բնույթը կարող է գիտական համայնքի տարբեր ներկայացուցիչների կողմից մեկնաբանվել տարբեր կերպ և իրարամերժ չափանիշներով: Միևնույն ժամանակ անհասկանալի է մնում, թե ինչպես պետք է որոշել պրագմատիկական ճշմարտության կիրառելիության տիրույթը, դրա կենսունակությունը և օգտակարությունը կշռադատությունների տվյալ համակարգի համար, այն ավելի լավ պրագմատիկական ճշմարտությամբ փոխարինելու անհրաժեշտությունը, ինչպես նաև մեկ պրագմատիկական ճշմարտությունը մյուսով փոխարինելու իմացաբանական-մեթոդաբանական հիփոթերն ու ընթացակարգը: Ի հակադրություն Ռասելի և Դյուի ֆալսիֆիլզոֆի, Փոփերյան ֆալսիֆիլզոֆը իմացաբանական-մեթոդաբանական հիմք է ձևավորում գիտության առաջնագծում կիրառելիություն ունեցող քննադատական գործիքակազմերի համար, ի դեմս ֆալսիֆիլզոֆիայի, որը ապահովում է հավանական սխալականությանը հակված մարդկային իմացության և հատկապես գիտական գիտելիքների կանոնավոր քննադատական փորձաքննությունները և ենթարկվելու անհրաժեշտությունը և մրցակցող սխալական (հիպոթետիկ) տեսությունների միջև հիմնավոր ընտրություն կատարելու հնարավորությունը՝ այս կերպ անմիջականորեն նպաստելով գիտելիքների աճին և գիտական առաջընթացին:

Ֆալսիֆիլզոֆի մի շարք ներկայացուցիչների մոտեցումները տարբերվում են նաև ռացիոնալ ճանաչողության հնարավորության վերաբերյալ հիմնահարցերում: Իրապես, ֆալսիֆիլզոֆը, առնվազն այն տարբերակով, ինչպես ձևակերպվել և զարգացվել է Հյումի և հետագա մի շարք այլ մտածողների կողմից, ունի շատ ավելի սահմանափակ և խիստ բնույթ, որը սկզբունքորեն կարող է հանգեցնել գիտական և ռացիոնալ ճանաչողության նկատմամբ թերահավատության՝ խթանելով ֆալսիֆիլզոֆի իռացիոնալիստական դրսևորումների առաջացմանը: Այս իմաստով 20-րդ դարի փիլիսոփայությունը նշանավորվում է նաև իռացիոնալիստական ֆալսիֆիլզոֆի զարգացման տարաբնույթ փորձերով: 20-րդ դարի նշանավոր իսպանացի փիլիսոփա Միգել դե Ունամունոն կարծում էր, որ մարդիկ պետք է բանականությունը և միտքը փոխարինեն հավատով, քանի որ բանականությունը չի կարողանում հաղթահարել գիտելիքների անորոշության և սխալականության խնդիրները: Այս առնչությամբ Ունամունոն գրում է. *«Ռացիոնալության կազմալուծումը ավարտվում է հենց բանականության լուծմամբ. այն ավարտվում է բացարձակ թերահավատությամբ՝ Հյումի ֆենոմենալիզմում: ... Բանականության գերագույն հաղթանակը՝ վերլուծական՝ կործանարար և տարրալուծող ունակությունը, կասկածի տակ դնելն է իր իսկ վավերականությունը: Խոց պարունակող ստամոքսը վերջանում է ինքն իրեն մարսելով»* [13, 104]: Ի տարբերություն Ունամունոյի և իռացիոնալիստական ֆալսիֆիլզոֆի մի շարք այլ ներկայացուցիչների՝ Ռասելի, Դյուիի ու հատկապես Պիրսի և Փոփերի ֆալսիֆիլզոֆի տեսություններից բխում է, որ նույնիսկ բացարձակ ճշմարտության անհասանելիության պարագայում հնարավոր է որոշակի ռացիոնալ

ընտրություն կատարել մրցակցող տեսությունների միջև և ունենալ թեև սխալական, բայց որոշակիորեն հիմնավոր և ճշմարիտ գիտելիքներ: Բանականությունը շարունակում է մնալ իմացության բարելավման, գիտելիքների աճի և գիտության զարգացման անօտարելի նախապայման: Հիմնված լինելով գիտելիքի, իմացության ու ճանաչողությանը վերաբերյալ ֆալսիֆիզմի աշխարհայացքային-իմացաբանական գաղափարների և մեթոդաբանական առավել ընդհանուր սկզբունքների վրա՝ հնարավոր է ոչ միայն ձեռք բերել հիմնավոր գիտելիքներ հետագա կշռադատությունների և տեսությունների ձևավորման համար, այլ նաև ապահովել դրանց շարունակական զարգացումն ու աճը՝ մշտապես քննադատության ենթարկելով ու բարելավելով եղած իմացությունը: Դիտարկելով ֆալսիֆիզմի զարգացումը տարածաժամանակային ավելի մեծ պատկերում՝ կարելի է նկատել նաև, որ ֆալսիֆիզմի ավելի վաղ ի հայտ եկած տարատեսակներն ունեին շատ ավելի խիստ, կատեգորիկ, սահմանափակող և պակաս կառուցողական բնույթ, քան ֆալսիֆիզմի ավելի ժամանակակից տարբերակները: Այս միտումը կարելի է արձանագրել Պիրսից ի վեր ֆալսիֆիզմի գրեթե բոլոր ներկայացուցիչների իմացանական հայացքները դիտարկելով: Այն, նախևառաջ, պայմանավորված է ինդուկցիայի, գիտական մեթոդի և գիտության փիլիսոփայության այլ հիմնախնդիրների հասկացման, վերաթևորման ու հաղթահարման բարդություններով, ինչպես նաև այլ հայեցակարգերի կողքին (ինչպես, օրինակ, իմացաբանական ֆունդամենտալիզմը, ռելյատիվիզմը, ինֆալսիֆիզմը և այլն) ֆալսիֆիզմի հայեցակարգայնացման ու արժևորման հաջող փորձերի բացակայությամբ:

Եզրահանգումներ

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ ֆալսիֆիզմի զարգացումը ժամանակակից իմացաբանությունում և գիտության փիլիսոփայությունում առավելապես պայմանավորվել է 19-20-րդ դարերում դասական ֆիզիկայի ճգնաժամով և գիտությունում քվանտառելյատիվիստական ֆիզիկայի հաստատումով: Մինևս ժամանակ ֆալսիֆիստական իմացաբանության զարգացման վրա էական ազդեցություն են ունեցել նաև իմացաբանական-գիտաբանական դասական խնդրակարգի մի շարք հիմնախնդիրների վերաիմաստավորման ժամանակակից փորձերը, որոնցից քննարկվող հարցի առնչությամբ առավել հետաքրքրական են գիտության և գիտական հետազոտության նպատակի, ինդուկցիայի ու ռացիոնալ ճանաչողության հնարավորության հիմնախնդիրները: Թեպետ ֆալսիֆիստական իմացաբանության շրջանակում Դյուին և Ռասելը կարողանում են հիմնավորել և զարգացնել ֆալսիֆիզմի հիմնական սկզբունքները, այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում անցում կատարել աշխարհայացքային ֆալսիֆիզմից, որի արդյունքում ֆալսիֆիստական հայեցակարգի իմացաբանական-մեթոդաբանական նշանակությունը իմացաբանության և գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների հասկացման և լուծման համատեքստում շարունակում է մնալ վիճահարույց: Մակայն այս հարցում հիմնարար նշանակություն ունեցան Փոփերի ռացիոնալ ֆալսիֆիզմը և ոչինդուկտիվիստական ֆալսիֆիկացիոնիզմը՝ հիմք դառնալով ռացիոնալ և գիտական ճանաչողության արժևորման, ինդուկցիայի հիմնախնդրի հաղթահարման, գիտության իմացաբանական-մեթոդաբանական հիմքերի վերաթևորման և ֆալսիֆիզմի առավել կառուցողական ու մեղմ տարբերակների ձևավորման համար: Փոփերի կողմից ձևակերպված ֆալսիֆիզմի հիմնարար ձեռքբերումներից է այն, որ նույն տեսության շրջանակում համադրվում են գիտական ճանաչողության և գիտելիքի սխալականությունը, գիտության առաջընթացի հնարավորությունը և ճշմարտությունը որպես գիտության վերջնանպատակ: Այս համադրությունը ոչ միայն ապահովում է գիտելիքների աճի ներքին տրամաբանությունը, այլև վեր է ածվում գիտության զարգացման հիմնական մեթոդաբանական նախապայմանի:

Գրականություն

1. Գրիգորյան Ք., Դեմարկացիայի և գիտության աճի հիմնախնդիրների նույնացումը ըստ Իմրե Լակատոսի // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 2 (17), Երևան, 2015, էջ 44-52:
2. Akelyan D. The Development and Manifestations of Fallibilism in the Epistemology of Descartes and Hume. Region and the World, No 1(50), 2024, p. 87-94.
3. Поппер К. Объективное знание: Эволюционный подход, 4-е изд., Ленанд; Москва, 2022, с. 384.
4. Davison D. Truth Language and History, Clarendon Press, Oxford, 2005, p. 372.
5. Dewey J. The Study of Inquiry. Henry Holt and Company, New York, 1939, p. 546.
6. Infeld L. Albert Einstein: His Work and Its Influence on Our World, Charles Scribner's Sons: New York, 1950, p. 132.
7. Mill S. J. On Liberty, Appleton-Century-Crofts, New York, 1947, p. 118.
8. Pierce C. S. Collected Papers (ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks). Harvard University Press, Volume 1-8, Cambridge, 1931-1958, (CP. VI, 1897).
9. Popper K. R. Conjectures and Refutations: The Growth of Scientific Knowledge, Routledge, 2nd edition, 2002, p. 608.
10. Popper K. R. The Logic of Scientific Discovery, Routledge, London and New York, 1985, p. 544.
11. Russell B. A History of Western Philosophy, Simon and Schuster, New York, 1945.
12. Swartz R, Perkinson H., Edgerton S. Knowledge and Fallibilism: Essays on Improving Education, New York University Press: New York, London, 1980.
13. Unamuno D. Tragic Sense of Life, Dover Publications, New York, 1954, p. 332.

Развитие фаллибилизма в современной эпистемологии и философии науки

Акелян Давид

Резюме

Ключевые слова: *возможность ошибки, методология, эмпиризм, прагматизм, позитивизм, критический рационализм, проблема индукции, истина*

В эпистемологии и философии науки XIX–XX вв. формирование концепции фаллибилизма было обусловлено рядом факторов. Важнейшими из них стали кризис классической физики и становление квантово-релятивистских теорий, а также попытки пересмотра традиционной эпистемологической проблематики. Существенную роль сыграли также фундаментальные работы представителей американского прагматизма и позитивистской философии.

Несмотря на то, что эти направления заложили теоретические основания фаллибилизма, им не удалось преобразовать его из мировоззренческого принципа в развернутую методологическую программу. В результате, эпистемологическое и методологическое значение фаллибилизма для решения современных проблем философии науки продолжает оставаться дискуссионным.

В рамках критического рационализма, прежде всего в работах Карла Поппера, фаллибилизм получает нормативно-методологический статус. Он оформляется как целостная программа неиндуктивистского фальсификационизма, ориентированная на критическую проверку научных теорий. Предложенный К. Поппером подход позволяет по-новому рассматривать проблемы демаркации науки и индукции, преодолевая ограничения иррационалистских интерпретаций. Одновременно он развивает фаллибилистско-эволюционистскую эпистемологию, согласно которой признание принципиальной ошибочности знания совместимо с пониманием истины как цели науки и выступает условием роста знания и развития научного познания.

The Development of Fallibilism in Modern Epistemology and Philosophy of Science

Akelyan Davit

Summary

Key words: *possibility of error, methodology, epistemology, philosophy of science, rationalism, empiricism, problem of induction, fallibility, truth*

In nineteenth- and twentieth-century epistemology and philosophy of science, the conceptual development of fallibilism was shaped by several factors. Most importantly, it was influenced by the crisis of classical physics and the emergence of quantum and relativistic theories, as well as by attempts to reconsider and reinterpret traditional epistemological and philosophy-of-science issues. The foundational works of representatives of American pragmatism and positivist philosophy also played a significant role.

Although pragmatists and positivists articulated and developed the core principles of fallibilism, they did not transform it from a general worldview into a fully developed methodological program. Consequently, the epistemological and methodological significance of fallibilism for addressing contemporary problems in epistemology and the philosophy of science has remained a matter of debate.

Within the framework of critical rationalism, particularly in the works of Karl Popper, fallibilism acquires a normative methodological status. It becomes a comprehensive methodological program in the form of non-inductivist falsificationism. Popper's approach offers solutions to the problems of demarcation and induction, overcomes the limitations of irrationalist conceptual approaches, and develops a fallibilist-evolutionary epistemology that reconciles the fallibility of knowledge with truth as the goal of science, linking the recognition of error with the growth of knowledge and the advancement of science.

Ներկայացվել է 28. 08. 2025 թ.

Գրախոսվել է 14. 09. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.